




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պատկերներ բոլոր լեզուների միացե՛ք!

Հայաստանի Հանրապետության
ՓՈԲՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

Գ. ՄԵՍՅԱՆ

Վ Ա Ն Ի Կ Ը



ՊԱՏՆԱԲԱՋԱՐԿ

89Բ. 995

Վ-66

ԹԻՖԼԻՍ—1926

19 NOV 2011

Պրոֆեսորներ բոլոր յերկրների միացե՛մ!

Իրանի արագ լայնի գրքերից
Փ Ո Ք Ր Ի Կ Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն № 3

881-993
15-64
այ

Գ. ՄԵՍՅԱՆ

== Վ Ա Ն Ի Կ Ը ==

ՊԱՏՄՈՒԱԾՔ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

1004
3063g

Վ Ա Ն Ի Կ Ը

(Մի պատկեր մոտիկ անցյալից)

Ամբողջ գյուղը ճանաչում եր փոքրիկ Վանիկին — թե մեծ, թե՛ փոքր։ Նեղլիկ ու ցեխոտ փողոցներում ամեն ուր կարելի յեր հանդիպել նրան։ Իր մանկական դեմքին մեծի լրջություն առած, առանց տրտնջալու առանց լացի՝ քաշ եր գալիս գյուղի մի թաղից մյուսը, ծռվում եր դեպի ամեն բակ, մտնում ամեն տուն։ Նրա վտանները առանց տրեխների, առանց գուլպաների, հենց ենպես, մերկ, բոբիկ ցեխի, ձյունի ու քարերի վրայով քայլում եյին։ Յերբեմն իր քայլի հետ հանկարծակի կոտրվում եր մեջքից, յերկուտակվում ու մրսած թաթի մեջ առնում վիրավորված կամ ցաված վոտը, կնճռում դեմքը ու քիչ հետո՝ կաղի տալով նորից շարունակում իր ճամբան։ Գյուղն ինքն ել եր Վանիկի նման մերկ, դատարկ։ Նրա սակավ բնակիչներն ել հիմա մի կտոր հացի կարոտ եյին, բայց ելի չեյին մերժում Վանիկին, չեյին վռնդում նրան իրենց դռներից։ Նրանք իրենց յերեխաների ձեռքի պատուրը

կիսում եյին Վանիկի համար, վորովհետև բոլորն ել գիտեյին Վանիկի պատմությունը, բոլորն ել նրան հասակակից յերեսխաներ ունեյին ու նրան սոված թողնելը ցավեցնում եր իրենց սիրտը:

Ամեն տնից մի պատառ վերցնելով, վորտեղ կշտանում (թեև յերբեք չեւ կշտանում նա), վորտեղ մթնում ենտեղ ել քնում եր Վանիկը—մի տաք թոնրի կողքի, մի տան պուճախում, մի գոմի մեջ...

Տարուց ավելի յեր, ինչ եսպես շրջում եր չորս տարեկան Վանիկը, իր գլուխը պահում Գյուլիի բոլոր տները մտնում եր նա վատահ, անյերկյուղ. շներն ել եյին ճանաչում նրան, չեյին հաչում վրան: Բայց յերբ հասնում եր իրենց թաղին, վախենում եր իրենց տնից ու հեռու շրջան տնում, մոտիկ տներն ել չեւ մտնում...

Շատ բան չգիտեր Վանիկը. շատ բան չեւ հասկանում նրա փոքրիկ ուղեղը, թե ինչո՞ւ եղպես ինքը մենակ մնաց, բայց են, ինչ վոր իր աչքովն եր տեսել՝ լավ հիշում եր ու վախենում իր հիշողությունից:

Նրա միտն եր, վոր գյուղն իրարանցում ընկավ, հարեանները՝ վորը սայլով, վորը ձիով, վորը շալակով—կապկպում, առնում հեռանում եյին: Իրենք վոչ սայլ, վոչ ձի, վոչ ել յեղ ունեյին: Շալակովները նրա հայրն ու մայրը պետք ե լի-

նեյին, բայց յերկուսն ել հիվանդ պառկած եյին տիֆով: Իրենց մասին մտածող չեղավ, թողին, փախան: Յերբ գյուղը մարդկանցից դատարկվեց՝ նրանից հետո լցվեց նոր մարդկանցով—բարկացած, սրերով ու հրացաններով:

Չեւ կարողանում հասկանալ Վանիկն ես բոլորը, Յեվ ինչպե՞ս հասկանար նա են անհասկանալին, թե ինչո՞ւ յեն մարդիկ կռվում, ինչո՞ւ յեն կոտորում իրար ե, թե ինչո՞ւ են մեղավոր իր ապին ու նանին, վորոնք վոչ կռիվ են ցանկացել, վոչ ել թշնամի ունեն:

Յեվ յերբ յիշեցնում եյին եղ որերը Վանիկին ու են ամենը, ինչ կատարվել եր նրա աչքի առաջ՝ նա կուչ եր գալիս, աչքերն անշարժա՝ նում եյին, բերը լայնանում...

Գյուղը թեև թալանել եյին մինչև վերջին ասեղը, բայց ելի, փախչողների աչքը դեպի հետ եր, ուզում եյին, վոր թույլ տան, վերադառնան—գուցե մի բան պատահամը մնացել եր մի պուճախում: Թշնամու սարսափը դեռ նստած եր գյուղում: Նրանց զայրույթը դեռ չեւ անցել:

— Բա եսպես տերություն կլի, ասում եյին իրար գյուղացիք ու գլուխները շարժում. բա, լաված բան ա, վոր մի տերություն թուր ու

թվանք քաշի, թոփի բերանն առնի իրա ժողովուրդին, թե նրա տունն ու տեղը պտի քանդի...

— Մինն ասի, ի՞նչ արինք մենք, վոր...

— Են արինք, վոր, ո՞վ գեղն յեկավ, ուզեց մեզ թալանի, ինքը հարստանա:

Ասինք, ազատություն յեկավ, թագավորը վերջացավ, հիմա մենք շունչ կքաշենք: Դու մի ասիլ, սա նրանից բեթար: Թե սո՛ւս ենք կենո՛ւմ, մեզ ուտում են—որը մին «ոբիսկ» են ասում, տուն թափվում, թալանում, անպատվում: Թե գանգատ ես անո՛ւմ՝ բռնում են, բերզը գցում. թե բռնվելուց ես փախչո՛ւմ ես ա, բահենց են անում, յետեցիդ ընկնում, թե խառնակիչ ես, բալ՝ լեվիլ...

Ու գեղի համար դժբախտությունը ծագեց հենց են ժամանակ, յերբ մի որ ել թուղթ յեկավ, թղթումն ել մի մեծ ցուցակ, թե եսքան տղերք պետք ե բռնոտվեն, ուղարկվեն—խառնակիչներ են...

Չուզեցին բռնոտվել սրանք ել, ու դժբախտությունը ետեղից սկսվեց:

Մի յերկու որ հետո, մի խումբ կռիկի հագնված չուխավորներ յեկան, կատաղած, մտքնեւում շատ անելիքներ... ինչ կարացին, արին, բայց չկարացին ոչովի բռնել. դուրս վռնդվեցին գեղից ու սպառնալով գնացին:

Սրանից հետո լուր հասավ, թե զորք ա գալիս: Վհնց թե տերությանը հակառակ կանգնեն: Գյուղն զգաց, թե ինչի՞ համար ե եդ զորքը գալիս ու փախեփախն սկսվեց. Գյուղացիք՝ ցրված անտառները, ձորերը, հարևան գյուղերը՝ ավելի շատ մեռնում, քան ապրում եյին: Սովը թշնամուց զորեղ դարձավ: Կամաց-կամաց սկսեցին ամենից առաջ վերադառնալ նրանք, վորոնք վո՛չ ոթեան, վո՛չ ել ուտելիք ունեյին գյուղից դուրս: Սովի սպառնալիքը ավելի մեծ եր նրանց համար, քան են վտանգը, վոր կարող եր պատահել գյուղում, թշնամուց: ✕

Մենակ Վանիկն եր, վոր բոլոր ժամանակ մնացել եր գյուղում. նա յեր միակ ախանատեսը, ինչ վոր պատահել եր գյուղում: Հիմա վերադարձածների մեջ շրջում եր Վարիկը. նրան խոսեցնում եյին ու պատմել տալիս են սոսկալի որերից, ինչ վոր պահել եր Վանիկը իր փոքրիկ հիշողության մեջ:

Կանգնեցնում եյին նրան ամեն տեղ. գյուղամիջում, փողոցներում, պատերի տակ, կտուրների վրա—վորտեղ հավաքված մի քանի մարդ եր լինում: Մի պատառ հաց, մի փշուր ուտելիք, վոր թեթեվացներ Վանիկին տանջող քաղցը, բաց եր անում նրա մանկական լեզուն: Նա կրկնում, պատմում եր են կարճ պատմությունը,

վոր գիտեյին բոլորը, վոր ենպես վախեցնում եր իր փոքրիկ հոգին:

— Վանիկ ջան, եստեղ յեկ.

Կանչում եյին նրան գյուղի զանազան մասերում:

Վանիկը կանգնում եր ու նայում հարցական, վոր իմանա նրանց հրավերքի արժեքը:

— Եստեղ յեկ, հաց կտամ, Վանիկ...

«Հացի» անունը բավական եր, վոր նրա թույլ քայլերը թեքվեյին այդ ուղղությամբ:

— Դե, սուս կացեք, Վանիկը պիտի պատմի մենշնվիկի մասին:

Ցնցում եր Վանիկին եղ մենշնվիկ բառը ու միշտ հիշեցնում նրան մի հին պատմություն իր մանրամասնությամբ, վոր չեր հեռանում նրա հիշողությունից: Խաղում եր ինքը մի որ կտրին: Աղմուկ բարձրացավ Սուրիկենց կալումը: Մի խումբ մարդիկ ծեծում եյին Սուրիկի հորը, նա չեր կարում վոչ ազատվի, վոչ պաշտպանվի. ճակատն ել արյունոտ եր, Վանիկը տեսավ: Հայրը տուն մտավ վրդովված, թե.

— Խեղճ մարդին բա չտեսար, ինչ արի՞ն.

— Ի՞նչ արին, հարցրեց Վանիկի մայրը, համ, հավեր.

— Ելի նրանք, մենշնիկները. լակել են հարբել, նի դառել խեղճ Ոսեփի տուն, տանեցոց

սրտաճաք արել ու ունեցած, չունեցած 10 խան դարու մեշոկը դուրս քաշել, բերել շուռ տվել ձիանների առաջը: Ստեփանը առաջ ա յեկել, թե, բա ամոթ չի, հին ժամանակվա ստրաժնիկները ըսկի եդպես չեյին անում, հիմի դուք ժողովուրդին ինչի՞ յեք նեղացնում, նրանց ուտելիք հացը խլում ձիաններին տալիս:

— Վրնց թե, ասում են. դու հավ ես, խառնակիչ ես, բալեվիկ ես...

Մաթրախները քաշեցին ջանին ընդ... բռնեցին խեղճ տղին, կապտեցին...

— Ապի, բա մեծ մարդին կթակե՞ն.

— Բա չեն թակի՞, Վանիկ ջան.

— Քեզ ել կարան թակե՞ն, տպի, աչքերը լայնացած, վախեցած, հարցրեց նա:

— Ի՞նչ... ու կմկմաց, խսկույն պատասխան չգտավ, իսկ Վանիկը մինչև հոր խոսքը լրացնելը համոզվեց, վոր իրա տպին ել կարան թակեն, նրա ճակատն ել կարող ե կարմրել: Յեվ Վանիկի համար այս բանը սոսկալի թվաց. մինչդեռ նա, մինչև այդ որը հավատացած եր, վոր մեծերին չեն թակում ու իր տպին ամենից ուժեղն ե աշխարհում:

— ...չե, ինձ հավ պտի թակի, բալիկս, յես մեծ եմ:

— Բա Սուրիկի ապին ինչի՞ թակեցին, նա մեծ չի:

— Հողեմ նրանց գլուխը, հալբաթ մինն ել կի, վոր նրանց կըթակի, հենց գիտում են, թե աշխարհքը իրանց ա մնացել, զրոյդ արավ Վանիկի մայրը:

— Մենշեիկներին կարան թակեն, ապի:

— Բա նհենց աչքներն ել չեն հանի, Վանիկ ջան:

— Ո՞վ կթակի, ապի. բա Ստեփան քեռին ինչի՞ չթակեց նրանց:

Ստեփան քեռին մենակ եր, նրան թակեցին, ամմա վոր նրա հընգերները հավաքվեն—են վախար նրանք կթակեն մենշեիկներին, Վանիկ ջան:

— Ստեփան քեռու հընգերները սվքեր են, ապի.

— Ստեփան քեռու հընգերները բալբեվիկներն են... մենք բոլորս ենք: Ու Վանիկը ասես թե մի բան գտավ այդ վերջին խոսքի հետ, վոր ուժեղից ուժեղը կա, ու կգա՝ պատժելու: Նա մոռացավ են վիրավորանքն ու վախը, վոր զգաց հոր համար, յերբ յերևակայեց նրան ծեծելիս, ճակատը կարմիր...

Այն որվանից այդ յերկու բառը ամուր նըստել եր Վանիկի մտքում «բալշեիկ», «մենշեիկ» ու չեր խառնում նա իրար հետ. և ավելի ամ-

րացավ, յերբ գյուղը փախչելուց հետո, Վանիկը մնաց մենակ եդ գյուղումը ու տեսավ մնացածն ել: Հիմա գյուղացիք նորից եյին ուզում, վոր Վանիկը պատմի իր տեսածը, չհասկանալով, թե վորքան դժվար եր ու ծանր եդ պատմելը Վանիկի համար:



Դո՛ւ յես սիրում մենսեիկին.

Հացի պատառը գայթակղեցնում եր սոված Վանիկին. մյուս կողմից մինը չարախինդ կերպով զրգռում եր Վանիկի ինքնասիրությունը, թե՛

— Վանիկը սիրում ե մենշեիկներին:

— Դո՛ւ յես սիրում մենսեիկներին, հար-

ձակվում եր Վանիկը իր պատասխանով, յես բալ-
սեվիկին եմ սիրում:

— Ինչո՞ւ, Վանիկ ջան, ի՞նչ են արել մեն-
շեկները...

(Մէջը հացի պատառին, վոր պետք է ստա-
նար, շարունակում եր Վանիկը ավելի շիկնած).

— Այ, եսպես—ու իր մանկական թաթը բա-
նում եր նա, դաշույն շինում ու տարուբերում
հետ ու առաջ—ղըշը՛, զըշը՛, զըշը՛...

— Ո՞ւմ են եղպես արել.

— Ասել եմ:

— Մենք չենք իմացել, մին ել ասա.

— Հա՛, հա՛, չենք իմացել, ձայնակցում եյին
մյուսները ևս ու ստիպում փոքրիկ Վանիկին նո-
րից կրկնել այն յերկու բառերը, վոր ենքան
զժվարությամբ եյին արտասանում նրա նիհար
շրթունքները:

— Ապին ու Նանին.

Վանիկի աչքերը փայլում եյին. նա մերթ
գետնին եր նայում, մերթ հացի կտորին:

— Բա, բալշեկին ինչո՞ւ յես սիրում, Վա-
նիկ ջան, ես ել ասա, հացը քեզ տանք.

— Բալսեկները պետք է թակեն մենսեկի-
ներին, նրանք ցեն թողնի, վոր մոլթեն...

Խլում եր Վանիկը իրեն մեկնած հացի պա-
տառը ու զողալով կլանում ենպիսի արագությամբ,

վոր կարծես թե իր նիհար մատներն ել հետն եր
ծամելու և կուլ տալու:

— Վոլ մեծանամ, բալսեկի մոտ պետք է
գնամ, ասում եր նա մի առանձին պարծանքով:

Ու սպասում եր Վանիկը, վոր հասնի են որը,
յերբ ինքը կրմեծանա ու ճամբան սովորի բալ-
շեկներին մոտ գնալու:

Յեվ հասավ եզ որը:

Չտեսնված տոն եր եզ գյուղի համար: Փա-
խածները վստահություն առան իրանց տները
վերադառնալու. նորից հին ծխնելույզներից ծու-
խը սկսեց բարձրանալ քուլա-քուլա:

Ծերերն ասում եյին, թե հիմա հանգիստ
կարող են մեռնել, ել դարդ ու վիրավորանք չու-
նեն իրենց սրտերում, յերբ մենշեկներին վերջը
տեսան: Բայց ջահելները մեռնել չեյին ուզում
ծերերի նման, նրանք գեռ անելիք ունեյին:

Մյուս որը, այդ գյուղը մտած կարմիրների
գինվորական շտաբի առաջ խմբվել եյին բազմա-
թիվ գյուղացիք.

— Պետրոս, դու յեկ ես գրվում.

— Բաս չգրվեմ.

— Յես ինչ գիտեմ. ասում եմ, մենակ մարդ
ես, մի տան տեր:

— Ինձ տունը վճրտեղից ե, տնաշեն, մեն-
շեկները տուն են թողել:

— Աղաջան ապորը տես մին.

— Աղաջան ապեր, դժու ինչի յես յեկել:

— Յեկել եմ յես ել գրվեմ, արևներդ մատաղ:

— Յետով, կարա՞ս գաս:

— Ում սրտին իմի նման գյուլա գիպած ըլի՝ կգա: Սրանց յեկած ճամբին մաաաղ, յես հո, հենց գիտում եմ, թե իմ փափագն ե կատարվել, սրանք հատուկ ինձ համար են յեկել, վոր սիրտս հովացնեն:

Աղաջան ապոր միակ վորդուն Ասլանին սպանել էյին մենշեխները, տունը թալանել:


Կարմիրների բանակը պետք ե շարունակել իր ճամբան: Սրանք ել իբրեւ կամավորներ միանում էյին նրանց: Բայց շտաբում հանկարծ բռնորը ժպտացին, յերբ նրանց առաջ կանգնեց մի հինգ տարեկան յերեխա ու ասաց.

— Ինձ ել բալսեիկ գլեցեք:

— Դու գնա տուն, փոքրիկ ջան, ասացին նրան կարմիրները, վոր մեծանաս, են վախտը կգրվես:

— Մենք տուն ցունենք, հանգիստ պատասխանեց Վանիկը:

Գյուղացիք պատմեցին Վանիկի փոքրիկ, բայց այնքան արկածալի անցյալը, ավելացնելով, թե ես գյուղում առաջին բալճևիկը Վանիկն



— Գնում ենք բոլսեիկդին ոգնելու:

ե, և մի տարուց ավել ե, ինչ սա պահում ե ձեր ճամբան:

Զինվորները գրկեցին, համբուրեցին Վանիկին ու սա դառավ նրանցից մինը: Հետևյալ ուրը Վանիկն ել են կիսամերկ Վանիկը չեր: Ճիշտ ե, մի քիչ մեծ եյին նրա վրա շորերը, բայց այժմ մոխրագույն շինելի ու պոպոզ գլխարկի միջից առանձին բավականությամբ փայլում եյին նրա գեղեցիկ աչքերը: Ել են առաջվա մարած ու թախծալի աչքերը չեյին՝ միշտ տազնապ սպասող: Նրա տրամադրությունը առանձնապես բարձրացրել եր մի զգացմունք, վոր յերկար ժամանակից ի վեր նա չեր ունեցել—նա կուշտ եր հիմա:

Այժմ, ամեն մեկի ձեռքն ընկած համեղ պատառը Վանիկին եյին մեկնում:

Մի քանի ուրից, շտաբը շարժվեց, Վանիկն ել նրանց մեջ: Յերբ գյուղացիք ժպիտով բարի ճամբա եյին ասում ու հարցնում.

— Վանիկ ջան, ուր ես գնում:

Նա լուրջ ու բավականություն հայտնող դեմքով պատասխանում եր:

— Գնում եմք բոլսեիկներին ոգնելու:

Մի յերկու ուր հետո, եզ գյուղում ուրախությամբ պատմում եյին, իրար աչքալուս տալիս, թե բալչեիկների կառավարությունն ա հիմի:

30638

ՀՀ Ազգային գրադարան



NL0347306

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԵԿԻ ՀԵՏԵՎՅԵԼ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՑԿՆԵՐԸ

- | | | |
|-------------|-----------|---------|
| 1. Բաղալը | | 25 կոպ. |
| 2. Խրճիթում | | 15 կոպ. |
| 3. Վանիկը | | 15 կոպ. |

Վաճառվում են հայ գրավաճառանոցներում.

Գումարով գնողներին զեղչ 20⁰/₀:

Հեղինակի հասցեն. Тифлис, улица Жуковского,
д. № 10.